ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Արթուր Մարտիրոսյան

2. Զբաղեցրած պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Բելառուսի Հանրապետություն, Մինսկ 2021թ սեպտեմբերի 27-29-ը

4. Հրավիրող կողմը

ԱՊՀ գործադիր կոմիտե

5.Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

ԱՊՀ մասնակից պետությունների 30-ամյակին նվիրված համաժողովին մասնակցելու համար:

6. Քննարկված թեմաները

- Նախորդ համաժողովի համառոտ ամփոփում,
- ԱՊՀ-ի 30-ամյա ներդրումը գիտության և կրթության զարգացման գործում
- Աշխարհում գիտության և տեխնիկայի զարգացման հեռանկարներին ժամանակակից միտումներին համապատասխան գիտական գործունեության բնագավառում Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող քաղաքականության ներկայացում, կրթության և գիտության միջև կապերի ներկայացում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովին հանդես եմ եկել զեկույցով՝ ընդգծելով միջոցառման կարևորությունը ԱՊՀ գիտակրթական տարածքում ուղենշային մոտեցումներ առաջադրելու առումով:

Ելույթում խոսվել է նպատակաուղղված և հետևողական տարվող աշխատանքի մասին՝ գիտնականների նոր սերնդի ձևավորման, գիտության մեջ երիտասարդ և հեռանկարային կադրերի ներգրավման ուղղությամբ, որի արդյունքում անցկացվում են գիտական նախագծերի համատեղ միջազգային մրցույթներ, իսկ գիտատեխնիկական կապերը զարգանում են ոչ միայն հիմնարար, այլև կիրառական հետազոտությունների բնագավառում: ԱՊՀ շրջանակում գիտատեխնիկական համագործակցության հետագա զարգացման առումով կարևորել եմ ԱՊՀ մասնակից պետությունների հիմնարար հետազոտությունների ոլորտում միջպետական հարաբերությունների համակարգման մասին 2019 թվականի մայիսի 31-ին Աշխաբադում ստորագրված համաձայնագիրը, որի շրջանակում փոխշահավետ և իրավահավասար հիմունքներով զարգանում է համագործակցությունը հիմնարար հետազոտությունների ոլորտում, ինչը նպաստում է հիմնարար հետազոտությունների նկատմամբ հետաքրքրության զարգացմանը և գիտական կադրերի պատրաստման որակի բարձրացմանը՝ ներառյալ ՏՏ երիտասարդ գիտնականների մրցույթները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

Թեմատիկ ոլորտային քննարկումների արդյունքները որպես քաղաքականության մշակման ռեսուրս ներկայացվելու են ԱՊՀ գործադիր կոմիտե՝ ԱՊՀ երկրների գիտակրթական համագործակցության խթանմանն ուղղված քաղաքականության զարգացման համար:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

04.10.2021

Recoverable Signature

X

ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Signed by: MARTIROSYAN ARTUR 4110790255